

լաթները, և բոլոր հրաւիրեալները հետեւեցան անոնց օրինակին:

« Ըմպենք նախ և առաջ ի պատիւ մեծին Արա- մազդի, երկնի և երկրի ամենակարող Արար- չին », ըսաւ Թագաւորը իր բամբ ու խոր ձայնովը:

Եւ ամէնքը խմեցին ի պատիւ հեթանոս Հա- յաստանի գլխաւոր աստուածին:

Երբ վար նստան, խումբ մը զուարթ աշուղ- ներու, հաւաքուելով ներս, նուագեցին իրենց քնարներն ու երգեցին Վահագն՝ պատերազմի աստուածին երգը:

« Երկներ երկին և երկիր,
Երկներ և ծիրանի ծով.
Երկն ի ծովուն ունէր զկարմիրիկ եղեգնիկն,
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր »:

Աշուղներուն յաջորդեց երաժիշտներու խումբը. Թմբկահար, սրնգահար, քնարահար և փողահար, որոնք նուագեցին բուռն, խանդավառ ու սիրատարի նուագներ, և պարուհիներ սկսան իրենց հեղաքայլ ու ծամածուռ պարը: Յետոյ երկու գուսաններ գայթ ի գայթ մտան ներս և զօսցուցին կոչնականները իրենց ազատ, յան- գուգն կատակաբանութիւններով: Գինովցան ամէնքն ալ, և նոյն իսկ Թագուհին Սաթենիկ անփոյթ էր ու զուարթ:

Յաջորդ առաւօտ կանուխ՝ մենք տղաքս հա- ւաքուեցանք գիւղի հրապարակին մէջ, ու վերսկսանք ճամբորդութիւննիս: Սեւանայ Լիճը կը շառագունէր, նման ողջակիզութեան կրա- կին, մարմարեայ անձուն կոնքի մը մէջ: Ինք- ղինքս զգացի ես իբր կարմիր տաբատով ու ոսկի սուրով բարձրագլուխ իշխան մը, որ կը

վերադառնար Հայաստան, երկու հազար տարի- ներու շրջանէ մը վերջ:

Մեր կոնակի մասնադները հիմա աւելի ծանր կը կշռէին քան Թէ նախորդ օրը: Տղաք, ինծի պէս, իրենց զգեստները փոխանակել էին ու- տելքներով: Բայց ես գիտեցի որ Արշակին մասնադը լեցուն չէր, և Թէ ինք չէր հագած իր « Ծըրզի » շապիկը՝ սպիտակ ու կապուտակ գիծերով: Իմ հաշուովս, ատիկա կրկին արժէքն ունէր հացին, պանիրին, կարագին ու մեղրին, զոր ստացել էի իմ շապիկիս փոխանակու- Թեամբ:

« Ի՞նչ ստացար « Ծըրզի » իդ փոխարէն », հարցուց իրեն. բայց ինքը գծկամակ էր ըսելու:

« Քեզի պէս աղուէս » - դռնեցի - օն, ըսէ ինծի, ի՞նչ ստացար. Կովկասեան ատրճանակ մը »:

Ան գլուխը ցնցեց:
« Երկնքի սիրոյն համար, Արշակ, ինչո՞ւ խորհրդաւոր ձեւ մը կու տաս այս խնդրոյս »:

Արշակ քմծիծաղով մ'ըսաւ « Սաթենիկ, ան սիրուն գէմքով աղջիկը որ մեզի գուռը բացաւ, սիրեց այն շապիկը »:

« Ուստի զայն իրեն նուիրեցիր: Կեցցես, Արշակ: Հիմա կը յուսամ Թէ դու բարի հայ մ'ըլլաս »:

Բայց ինքը չփոթեցաւ այս հայրենասիրական գովեստէս:

Քիչ մը ատեն լռութեամբ առաջ քաշեցինք: Արշակին աչքերուն նայուածքէն հասկցայ որ ապահովապէս իր ալ մտքէն իմ մի և նոյն խոր- հուրդներս կ'անցնէին: Մեր սրտերուն մէջ խորտակուեցաւ բան մը, զոր կարող չէինք խօս- քով արտայայտել, և բաւական ժամանակ ան- ցաւ, մինչեւ որ մեզմէ մին կամ միւսը խօ- սեցաւ դարձեալ:

Ձ. ՍԻՒՐՄԵԼԵԱՆ



ԽՈՐՀՐԴԱՍՔՈՂ, ԱՆՍՈՎՈՐ*...

Իրենց երկրին են եկեր գաւառներէն զանազան,
Այս այրին մէջ քարեղէն՝ եղբայրացիք իրարու.
Փառքի բոցեր ընծայող ազատութեան սրբազան
Թառած իրենց ա՛չքն արու:

Խմբապետին իրենց հայ, խորհրդասրբող, անսովոր,
Ներկայութիւնն իսկ որուն հոս առասպել կը թուի,
Ձերմ փարած են զգացմամբ, իրենց տիրած է սրտին
Լուծով սիրոյ, ո՛չ վախի:

Ոմանք՝ զաւկի տէր հայրեր, այլք՝ զաւակներ դեռ անփորձ,
Երիտասարդ են սրտով ազատորդիքն այս բողոք,
Արհեստաւոր կամ բանուոր, վաճառական, հողագործ,
Ահա՛ դարձեր են զինուոր:

Պատրաստ, արի՛, անհամբեր, զերդ աղեղէն մեկնող նետ,
Խմբապետին կը սպասեն հըրամանին վճռական.
... Ու քարերն իսկ ընդվզին պիտի կարծես՝ իրենց հետ՝
Ընդգէմ անարգ բռնութեան:

ՀՐԱՉ ՔԱԶԱՐԵՆՑ

1943, Նոյեմբեր.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԻՐԱՀԱՐ

Հայ դպրութեանց հողերուն վըրայ՝ մշակ նորընծայ՝
Կ'աշխատէի, ահազանգ երբ անդունդներդ հնչեցին.
Ծածանեցան զըրօշներ և մերկացան սրբիներ,
Եւ ռազմերգներ սանձարձակ՝ բարձունքներու վըրայ ուժգին:

Հայ դպրութեանց պարտէզին ծաղիկներն իմ սրտիս մէջ,
Արեգակն իմ սրտիս մէջ, դուն զիս տեսար, իտալիա,

* 8 սեպ. 1943-էն ետք՝ Հ. Ք. որ զէնքի տակ կը գտնուէր տեղակալի աստիճանով, միացաւ այն ուժերուն՝ որոնք կը մարտնչէին հիւսիսային իտալիոյ գերման բռնազրաման ջրամօթ. խմբ.

Ազատութեան սիրահար որդեգրող հետ կողք կողքի,
Դժբախտ երկիր, Տանգէլ՝ ուր դեռ ոգին կը գոռայ:

Գրնահատանքն այս ազնիւ՝ զոր կ'ընծայես ինձ հիմայ *,
Յուզուած սրտէս աւելի՝ մեծ սիրտն ազգիս կ'ընդունի,
Կ'առաջադրեմ ես ըլլալ յաւէտ ձեզի՝ արժանի,
Ձեզի՝ անոյշ Արմենիա, և խաւիւս վշտալի:

Ազատութեան դրօշին տակ՝ պիտի տեսնէք զիս կանգուն,
Հոն ուր սուրի՝ և հուրի՝ կայ փոթորիկ աւելի:
Շղթաներու խորտակում մինչեւ, վերջին յաղթութիւն,
Մինչեւ սիրոյ Ծաղկազարդ, վերածնունդ արեւի:

ՀՐԱՉ ՔԱՋԱՐԵՆՑ

1945, Փետրուար.

* Խաւիւս ազատագրութեան պայքարին իր բերած մասնակցութեամբ՝ Հ. Ք. երբ անգամ ընդդիմադիր թաքուն ուժերուն՝ արժանացաւ երկու ռազմական խաչի:

Ծանօթ. Խմբ.

ԲԱԺԱԿԱՆ ԶՈՒՆՁՔԸ

Պատուհանէս ներս ճիւղերը կախած,
Լուռ մըտիկ կ'ընես երգերուս մեղրիկ:
Դուրսն է ցրտաշունչ եւ ձիւնը ծածկած,
Ձմեռն սարսուռն է պատած ծառ ծղրիկ:

Դու միայն խաղաղ թեւերդ հոլանի,
Արեւատ դարնան բացած ես ծաղիկ:
Դու պատկերիս պէս կանգնած պարմանի,
Կը ժրպտիս, թերթերդ պարզած անուշիկ:

Ա՛յնքան սիրուն ես, ու ա՛յնքան փափուկ,
Որ հովեր մօտէդ երկիրդով կ'անցնին,
Խըլած բաժակիդ մէջէն կարմըրուկ
Ափ մը բոյր... նըէր քովէդ անցորդին:

Ճղրիկ մը ունիմ... ոստերէդ ծաղկած
Սեղանիս վըրայ, դեռ նոր եմ քաղեր:
Բիւրեղի նման թերթերդ փըշրւած
Ծոցերնին մէկ մէկ չիթ չաղ ես պահեր:

Ու կը թափթըփին ամէն հըպումիս,
Կ'իյնան ափիս մէջ փոխուած ուլունքի:
Անգոր խորտակուած դէմն իմ կեցուածքիս
Կը լուծուին ափիս մէջ վարդեջուրի:

Թերթիկներդ ոսկի սափորէդ մեղմիկ,
Խոկումներուս պէս կ'իյնան խաչին տակ:
Հոն փորուած քու ցուրտ հողմարիդ մօտիկ
Տեղիկ մ'ալ ինձ տուր, բաժակածաղիկ:

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Վիճեմիկ, 18 - 1939.

ՄԵՐ ԳՐԱԿԱՆ ՀՈՒՆՁՔԸ

ԱՐՄԷՆ - ԵՐԿԱԹ - « ՍՈՆԱԹԵՆ » ԳԱԶԵՏԻ,

1945.

Նոր հատորով մը ասպարէզ կ'իջնէ
Արսէն Երկաթ՝ Սոնաթներով, տաղաշարք
մը միտիք ու խորհրդապաշտ բանաս-
տեղծութեան, որուն կը յաջորդէ նոյն
հատորին մէջ՝ Միջանկեալ շարքը՝ «Մի-
ջանապագայ» նշանակութեամբ, եւ ասպ-
արէրդ մասը՝ Հայրենական Քերթնաւած-
ներ՝ որ կը փակէ հատորը:

Սոնաթներու ընթերցումով կարծես
անուրջի պարտէզ մը կը մտնես, ուր ա-
ծուներու գիծերը չփոթուած են իրարու,
տարտամ ուղղութիւններով, ծաղիկները
տփգոյն գեղեցկութեամբ զարդարուն, եւ
ընդհանուր միտքամածային մթնոլորտով
մը պաշարուած՝ որ կը տրամադրէ հո-
գիք խորհելու, գուշակութիւններ կատա-
րելու...: Կը հասկնամ, խնդիրը խորհըր-
դապաշտ բանաստեղծութեան հետ է, ար-
տայայտուած միտքը խորհուրդով մը, ա-
ւելի ճիշտ՝ խորհրդանշելով ներկայա-
ցուած պէտք է ըլլայ:

Արսէն Երկաթ՝ մեր բեղուն բանաս-
տեղծներէն է. իր թողած արտագրութիւ-
նը արդէն երկուքէ աւելի բանաստեղծնե-
րու կը բաւէ, բայց ուր ամէն երգ նոյն-
քան անուշ չէ: Եւ արդէն բոլոր բանաս-
տեղծներուն, նոյնիսկ ամենամեծերուն բո-
լոր քերթուածներն ալ նմանապէս յաջող
լուր քերթուածներն ալ նմանապէս յաջող
չեն, ինչպէս Հիւսիսի, Լամարթիւի, Միւ-
սէի, Պոտլէի, Վերլէի, Լէոնարտիի,
եւ այլն, այլ ընտրանք գատելու է ա-
նոնց մէջէն գեղեցիկները, յաջողները
անյաջողներէն: Այսպէս կարելի է ըսել
Սոնաթներ հատորին երեք մասերուն հա-
մար ալ:

Սոնաթները ամբողջապէս եղական
նկարապիւր մ'ունին, միտիքական ու ա-
նըրջային, երաժշտական երկար ցայգա-
նուազային խորհրդաւորութեան մը մէջ
երգուած: Հոս յաջողագոյն են Սոնաթ

Ուրախութեան, Սոնաթ Հովին, եւ մանա-
ւանդ Սոնաթ Կանայի հարսանիքին հա-
մար: — Բանաստեղծութիւնը անշուշտ ե-
րաժշտութիւն է եւ հոգիի երաժշտութիւ-
նը՝ արտայայտուած բառերով: Այս ար-
տայայտութիւնը իր կանոնաւորութեան
տայայտութիւնը իր կանոնաւորութեան
մէջ աւելի կատարեալ է, եւ ձեւերու,
զարկերու, կէտադրութեանց միջոցով ա-
ւելի խօսուն, զգալի եւ ճաշակելի կը
դառնայ: Բայց Արսէն Երկաթ կը վախ-
նայ՝ որ կէտադրութեամբ՝ քերթուածին
միայն արդեցութիւնը կը կոտրէ եւ կամ
կը վնասէ իմաստներու խորախորհուրդ
տպաւորութիւններու հմայքին: Երկրոր-
դականութիւններու հմայքին: Երկրոր-
դական է այս խնդիրը, գաղափարներու
կապն ու ներդաշնակ լծորդութիւնն է որ
պիտի ասպարէզէ արժէքը կտորին, եւ
յօրինուածքին լեզուական սահունութիւ-
նը, բան մը որ ստուգիւ Սոնաթներու
մէջ անգամ արդարեւ երգերը, տօները,
ժողովրդական աւանդութիւնները իրենց
աղբերակները ունեցած են, ինչպէս կը
տպաւորութիւնը իրենց անհատական
տեսանկի «Նոր Սոնաթ Կաղանդի Գիշեր-
տեսանկի» «Սոնաթ Համբարձման Օր»-ին մէջ
ուսն», «Սոնաթ Երեւանի կարծես
եւ այլն: — Սոնաթներու բաժնին կարծես
էր նաեւ Հայրենական Քեր-
թնաւածներու խումբին մէջ խառնած եր-
կու սիրուն տաղերը. «Տաղ Չուարթնոց
կու սիրուն տաղերը», եւ «Աստուածածինը
Եկեղեցիին համար», եւ «Աստուածածինը
Ս. Նշանի վանքին մէջ», որոնք երկուքն
ալ իրենց նկարագրով կը զանազանուին
խումբին մէջ, որքան որ իրենց նիւթով
հայրենասիրականի մօտենան: Նիւթէն ա-
ւելի՝ յօրինուածքի յատկանշական բնոյթն
է որ կը զուգարկէ գաղափարն է գաղափար-
էր խնդրին մէջ: Սոնաթներու բաժնին
մէջ ալ կան որ հայրենասիրական են նիւ-
թով, բայց չեն փոխած իրենց տեղը:
Միջանկեալները, հնչեական գրեթէ
բոլորն ալ, քերթողագրերն ամէնէն գող-